ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Արագյուղ բնակավայրում դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության երկրորդ հանրային լսման վերաբերյալ

05.08. 2025թ. **Արագյուղ բնակավայր**

Հանրային լսմանը մասնակցում էին՝

- Հանրային լսման պատասխանատու՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ Ռուզան Մակինյանը,
- Տարածքային զարգացման հիմնադրամի մասնագետ՝ Դավիթ Եսայանը,
- «Մոդուլ» ՍՊԸ -ի գործադիր տնօրեն՝ Վահան Վարդանյանը և մասնագետներ,
- Նաիրի համայնքի ներկայացուցիչ՝ Արմեն Գևորգյանը,
- Արագյուղ բնակավայրի վարչական ղեկավար՝ Անդրանիկ Մեջլումանը,
- Արագյուղ բնակավայրի բնակիչներ:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (03.05.2024թ. ՀՕ-150-Ն, այսուհետ՝ Օրենք) համաձայն, ինչպես նաև ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի N2343-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) սահմանված կարգով 2025թ. մայիսի 8-ին ժամը 15:00-ին Նաիրի համայնքի Արագյուղ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ Արագյուղ բնակավայրում միջնակարգ դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության երկրորդ հանրային լսումը:

Հանրային լսումը վարեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ Ռուզան Մակինյանը, ով հանդես եկավ բացման խոսքով՝ ներկայացրեց փորձաքննական գործընթացը և կատարված աշխատանքները:

Հաշվետվությունն Օրենքով սահմանված կարգով ներկայացվել է շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներին և տարբեր գերատեսչություններին կարծիքներ ստանալու համար: Փորձաքննության իրականացման արդյունքում հաշվետվության վերաբերյալ եղել են առաջարկություններ և դիտողություններ, որոնք հաշվի են առնվել լրամշակում կատարելիս և հաշվետվությունը ներկայացվել է նախաձեռնողին լրամշակման:

Լրամշակված հաշվետվությունը նախաձեռնողի կողմից լիազոր մարմին մուտք լինելուց հետո, օրենքով և կառավարության Որոշման պահանջներին համապատասխան նշանակվել է հանրային լսում: Այս հանրային լսումն օրենքով 2-րդն է, 1-ին հանրային լսման արդյունքում համայնքի ավագանին տվել է իր նախնական համաձայնությունը:

Համաձայն կառավարության Որոշման՝ շահագրգիռ հանրության գրավոր կամ էլեկտրոնային կարծիքները, դիտողությունները կամ առաջարկությունները պետք է

ներկայացվեն ծանուցումից հետո՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում փորձաքննական կենտրոն:

Ռուզան Մակինյանը ներկայացրեց նախատեսվող գործունեության նպատակը, շրջակա միջավայրի բոլոր բաղադրչների վրա հնարավոր ազդեցությունները և ՇՄԱԳ հաշվետվությամբ ներկայացված ազդցությունների մեղմման վերաբերյալ նախատեսված միջոցառումները, մասնավորապես՝ մթնոլորտային օդի, հողային ռեսուրսների և այլնի վերաբերյալ:

Ռուզան Մակինյանը նշեց, որ շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել բարեկարգման և կկանաչապատման աշխատանքներ:

Անդրանիկ Մեջլումանը հարցրեց, ինչ ծառատեսակներ են ընտրված կանաչապատման նախագծով:

Ռուզան Մակինյանը պատասխանեց, որ ՇՄԱԳ հաշվետվությամբ ընտրված են տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներ:

Վահան Վարդանյանը նշեց, որ կանաչապատման աշխատանքները սկսելուց առաջ նախագիծը կներկայացվի համաձայնեցման:

Ռուզան Մակինյանը հավելեց, որ շահագործման ընթացքում շենքի կանաչ տարածքների և նորատունկ բուսականության խնամքը հետագայում կիրականացվի դպրոցի կողմից, ինչը կներառի նաև նորատունկ կանաչ գոտու վիճակի մշտադիտարկումները, որի ընթացքում կպչողականություն չապահովող ծառատեսակները կփոխարինվեն նորերով:

Մակինյանը խոսեց դպրոցի համար նախատեսվող կոյուղու կեղտաջրերի մաքրման կայանի վերաբերյալ , այնուհետև առաջարկեց մաքրված ջուրը օգտագործել դպրոցի կանաչ տարածքների ոռոգման նպատակով:

«Մոդուլ» ՍՊԸ -ի մասնագետ Վիկտորյա Ավագյանը պատասխանեց, որ մաքրված ջուրը որակապես բավականին կոշը ջուր է և ցանկալի չէ օգտագործել դեկորատիվ ծառերի ոռոգման համար:

Վահան Վարդանյանը հավելեց, որ ելնելով խնդրից նախատեսվում է միանալ բնակավայի ոռոգման ցանցին:

Անդրանիկ Մեջլումանը առաջարկեց ներկայացնել ոռոգման նախագիծը, որպեսզի որոշվի բնակավայի ոռոգման ցանցին մինալու համար անհրաժեշտ կետը:

Վահան Վարդանյանը ներկայացրեց կառուցապատման տեխնիկական ցուցանիշները, նախագծը, ինչպես նաև շինհրապարակի կազմակերպման աշխատանքները:

Անդրանիկ Մեջլումանը հարցրեց առկա դպրոցի քանդման աշխատանքների հաջորդականության վերաբերյալ:

Վահան Վարդանյանը պատասխանեց, որ քանդման աշխատանքները իրականացվելու են մեխանիկական եղանակով, սկզբից կապամոնտաժվի տանիքը, լուսամուտները և դռները, այնուհետև պատերը:

Մակինյանը առաջարկեց որպես սոցիալական դրական ազդեցություն ապամոնտաժման արդյունքում առաջացած թափոններից օգտագործման համար պիտանի

երկրորդային հումք հանդիսացող թափոնները տրամադրել բնակավայրի անապահով ընտանիքներին:

Առաջարկը ընդունվեց ներկաների կողմից:

Ռուզան Մակինյանը հավելեց, որ նախատեսվող գործունեության տարածքում և հարակից մոտակա տարածքներում բացակայում են Կարմիր գրքյան բուսատեսակները, կենդանատեսակները, ինչպես նաև պատմության, բնական հուշարձանները և մակերևույթային ջրերը:

Հանրային լսումներում այլ առաջարկներ և դիտողություններ չներկայացվեցին:

Հանրային լսումները լուսանկարվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
առաջատար մասնագետ՝ Ռուզան Մակինյան

«Մոդուլ» ՍՊԸ -ի գործադիր տնօրեն՝ Վահան Վարդանյան,

Մասնակիցների ցանկ

N	Անուն, ազգանուն	Կազմակերպություն/պաշտոն	Հեռախոսահամար	Ստորագրություն
1.	[illegible]	[illegible]		
2.	[illegible]	[illegible]		
3.	[illegible]	[illegible]		
4.	[illegible]	[illegible]		
5.	[illegible]	[illegible]	099-97-93-99	
6.	[illegible]	[illegible]	093408840	
7.	[illegible]	[illegible]	077373765	
8.	[illegible]	«[illegible]» [illegible]	077772670	
9.	[illegible]	«[illegible]» [illegible]		
10.	[illegible]	«[illegible]» [illegible]		
11.	[illegible]	«[illegible]» [illegible]	095220219	
12.				
13.				
14.				
15.				
16.				
17.				
18.				
19.				
20.				
21.				
22.				
23.				
24.				